

էջ 276) Էլ-Պիրէհի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէկ նկարազարդութիւնը, կրօնական հնախօսութեան մասնագէտ և ԺԹ. դարու կիսուն Էլ-Պիրէհի եկեղեցին այցելող Պարոն Taylor-ի (Անգլիացի ընտանիքէ ծնած, ի Պրուքսէլ, 1789-1879) կարեւոր մէջբերումներով.

«Եկեղեցին 43 մ. երկարութիւն և 22 լայնութիւն ունէր. իր ոճը լաւ կը համապատասխանէ 1146ին՝ որ անոր աւարտումի թուականը կը նկատուի»: Սակայն, Պարոն Taylor-ի մէկ գիտողութիւնը կը հաստատէ այն աւանդութիւնը՝ որուն համաձայն եկեղեցին կառուցուած էր Նախնական սրբավայրի մը տեղւոյն վերայ. «հիւսիսային կողմը, կ'ըսէ, մեծ մասամբ առաջին մայր եկեղեցիին խոշոր քարերովը շինուած է»: Ամբողջ շինուածքը՝ Տիւրոսի, Թորթոզի և Սեբաստի մեծ եկեղեցիներու նման, լեցուած քարերու միջուկի մը վրայ՝ խիտ կապերով բռնուած՝ տաշուած քարեր կը զարդարեն:

Յատակագիծը՝ բացի երեք կողակներէ, որուն կեղրոնինը նեղ դաս մը ունի, կը պարունակէ նաև նաւ (nef) մը և կողմնաթեւեր՝ որոնց չորս գերանամէջերը (travées) առաւել կամ նուազ պահուած են հիւսիսային կողմը. եկեղեցին խաչաձև չէ: Կողմնաթեւերը ունին գեղեցիկ ցցուած կամարներ՝ որ կը բարձրանան մինչև մոյթերը մայր կամարին:

Այս վերջինը ամբողջութեամբ անհետացած է. չի գիտցուիր թէ՛ ան որրանաձեւ էր թէ ցցուն կամար. բայց Պարոն Taylor տակաւին կրնայ հաստատել թէ «նաւին ստորին սիւները կ'սկսին կրկնակամարները կրող խոյակին տակ գտնուած զիմաշարի մը դարեանդով (encorbellement)»: Նաւին հիւսիսային պատը կը կենար այն տտեն հիւսիսային կողմնաթեւին հետ, որուն արտաքին պատին քարերը փրցուած էին և երեք կողակները, հարաւային կողմնաթեւի կիսակործան մնացորդները միայն կը մնային աւերակներու վերջին զիճակին մէջ:

Աղեղները և կրկնակամարները կրկնակոր և խիստ ցցուն էին. կողակներու պատուհանները՝ առանց ուէ զարդի, պորտի քարին (clef) հետ ունէին խիստ բարակ բեկուածի մը աղեղը. կողմնաթեւերն ու աղեղները ունէին կրկին չըջանակում, մին՝ ներքին և շեղ, միւսն՝ առանց չեղութեան, և զարդարուած կրրունկի ձևով ցցուակի մը (moulure) նման: Գլխաւոր կողակը ունէր երկու որմածակ իրարու վրայ: